# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ
# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**30 մարտի 2017 թվականի N 62-Ա**

## ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն <<Հայաստանի Հանրապետության 2017 թվականի պետական բյուջեի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի և Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետի առաջին մասի, 1.12-րդ կետի <<բ>> ենթակետի, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Լեռնանիստ համայնքի բնակիչ Ն. Աղիրեկյանի դիմումը՝ **որոշում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման <<Այլ նպաստներ բյուջեից>> հոդվածով նախատեսված ծախսերից սոցիալական աջակցության նպատակով հատկացնել՝ Նարինե Աղիրեկյանին 300 000 (երեք հարյուր հազար) ՀՀ դրամ միանվագ օգնություն՝ համաձայն հավելվածի:

2. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի գլխավոր ֆինանսիստին՝ հինգ աշխատանքային օրյա ժամկետում ապահովել գումարի վճարումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Կ. ԳՈՒԼՈՅԱՆ

**2017 թվականի մարտի 30**
**ք. Հրազդան**

Հավելված
ՀՀ Կոտայքի մարզպետի
2017 թվականի մարտի 30-ի N 62-Ա որոշման

Դրամական օգնություն ստացողների ցուցակ

| Հ/Հ | Անուն Ազգանուն | Բնակավայր | Գումարը | Ծանոթություն |
|---|---|---|---|---|
| 1 | Նարինե Աղիրեկյան | գ. Լեռնանիստ | 300 000 | |